ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑՈՒ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ» ԱՎԱՐՏՄԱՆ ԹՎԱԿԱՆԸ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ

Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայ պատմագրության XII դարի նշանավոր երկերից է Սամուել Անեցու «Հավաքմունք ի դրոց պատմագրաց...» վերնագիրը կրող ժամանակագրությունը։ Սամուելը բազմաթիվ աղբյուրներում հիշատակվում է որպես «քահանայ Կաթողիկեին Անւոյ»[1], աշակերտել է Գևորգ վարդապետին, Հովհաննես Սարկավագին։

Տարածված տեսակետի համաձայն (որը տեղ է գտել Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մեջ, Հանրագիտարանում և այլուր) Անեցու ժամանակագրությունը «սկսվում է Ադամից և հասցվում մինչև 1180 թ.». դրվել է «Գրիգոր Տղա կաթողիկոսի հանձնարարությամբ»[2]։ Սակայն Սամուելի երկի Կամրջաձորում գրված ամենավաղ ընդօրինակությունը և մի քանի այլ փաստարկներ, թույլ են տալիս վերանայել այս երկու գրույթը։

Ժամանակագրության հայերեն լեզվով եղած առայժմ միակ հրատարակությունը կատարվել է 1893 թ. Վաղարշապատում, Արշակ Տեր-Միքելյանի աշխատասիրությամբ[3]։ Այն ավելի վաղ թարգմանվել է լատիներեն, հատվածաբար՝ ֆրանսերեն, իսկ XIX դարի վերջերի հայ ուսումնասիրողներին ծանոթ է եղել նաև զանազան ձեռագիր օրինակների միջոցով։

Հայերեն հրատարակության համար հիմք ծառայած 12 ձեռագրերը, ցավոք, լինելով գլխավորապես «յետին դարերից», հետագա շրջանի բազմաթիվ գրչական միջամտություններ են ունեցել, որը ժամանակագրության՝ աղյուսակների մեջ շարադրված լինելու հետևանք է («...գրչակները բաց տեղեր տեսնելով կավելացնեին զանազան պատմական տեղեկություններ»[4])։ Նման պայմաններում, ուշ շրջանի ձեռագրերում հաճախակի են շեղումները աշխատության հեղինակային բնագրից, հատկապես նրա վերջնամասում, ուր մի քանի մանր ժամանակագրություններ են ավելացվել, դեպքերի թվարկումը հասցնելով XIV, անգամ XVII դար։

Սամուել Անեցին իր պատվիրատուին ու հովանավորին անվանապես հիշատակում է երկու անգամ. «Իսկ իմ մոռացեալ զտգիտութիւն ...իմ, ի թախանձելոյ քոյ, սրբազգեացդ. Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամաց ձերոց, առ ի գրել, զոր կամեցար», «...ով սրբազգեաց տէր իմ Գրիգոր, հարկեցայ ի թախանձելոյ ձեր ... ետու զանարհեստ անձն իմ ի մշակութիւն այս գոր-

---

1 Հ. Ա ն ա ս յ ա ն. Հայկական մատենագիտություն. հ. Ա, Երևան, 1959, էջ XLIX—LIII։

2 Հայ ժողովրդի պատմություն. հ. III, Երևան, 1976, էջ 805։ Հայկական հանրագիտարան. հ. 10, Երևան, 1984, էջ 161։ Ս. Մ ե լ ի ք-Բ ա խ չ յ ա ն. Հայոց պատմության աղբյուրագիտություն. Երևան, 1979, էջ 173 (վերահրատ. Երևան, 1989, էջ 171) և այլն։

3 Սամուելի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի դրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893 (այսուհետև՝ Սամուել Անեցի)։

4 Ս ա մ ո ւ ե լ Ա ն ե ց ի, էջ 2—Իէ։ Ա. Տեր-Միքելյանի օգտագործած ձեռագրերի թվում չեն եղել Անեցու ժամանակագրության մեր օրերը հասած ամենավաղ ընդօրինակությունները՝ 1176 թ. Կամրջաձորի, XII դարի վերջերի Հռոմոսի օրինակները (Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), ձեռ. №№ 5619, 3613), 1236-ին Անիից Գիլիկիա տարված օրինակը (Երուսաղեմ, № 1801)։

ծոյ»[5]։ Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն (1113—1166), թե՞ Գրիգոր Դ Տղային (1173—1193) նկատի ունի պատմիչը։ Այս հարցում ուսումնասիրողների մոտ տարբեր կարծիքներ են ծագել։

Ղ. Ալիշանը Գրիգոր Գ Պահլավունու մասին գրելիս նշում է, որ նա հորդորիչ և մեկենաս եղավ իր մերձավոր և հեռավոր վարդապետների համար՝ «որոց մէջ համարուի ժամանակագիրն Սամուել երէց Անեցի», իսկ քիչ անց ավելացնում է. «Թէև սովորաբար ըսինք կարծուի, որ Սամուէլ Գրիգորիսի յորդորմամբ գրած ըլլայ ժամանակագրութիւնը, այլ ինձ թուի թէ ոչ այնր, այլ Գր. Տղայոյ խնդրոյ գրած է, որոյ ժամանակն ալ կը դադարցրնէ պատմութիւնը...»[6]։ Գիտնականը ժամանակագրության ավարտի թվական է համարում 1177 թ.[7]։

Գ. Զարբհանալյանի կարծիքով Սամուելի շարադրանքը հասնում է մինչև 1179 թ., պատվիրատու է համարում Գրիգոր Գ Պահլավունուն[8]։ Ա. Զամինյանն այս վերջին թվականի հետ համամիտ լինելով, Սամուելի երկի պատվիրատու է կարծում Գրիգոր Տղային[9]։ Մ. Արեղյանը չի կասկածում, որ ժամանակագրության պատվիրատուն Գրիգոր Գ Պահլավունին է, ավարտի թվական է նշում 1180-ը[10], իսկ Հ. Աճառյանը տարակուսում է, թե Անեցին «գրել է Գրիգոր Գ (կամ Դ՞) կաթողիկոսի հորդորանքով»[11]։ Ա. Առաքելյանը պատվիրատուին անվանում է Գրիգոր Պահլավունի (սովորաբար այսպես են կոչում Գրիգոր Գ-ին), նույն կերպ է դրում Լ. Բաբայանը[12], չնայած, որ մինչ այդ Գրիգոր Տղային է համարել Սամուելի հովանավոր[13]։ Ժամանակագրության վերջին թվականը 1180 թ. ընդունելով Գրիգոր Տղային պատվիրատու է համարում Ս. Մելիք-Բախշյանը[14]։

Ա. Տեր-Միքելյանը ժամանակագրության վերջին հիշատակությունը դրնում է 1180 թ. տակ (պատվիրատուի խնդրին չի անդրադառնում), ծանոթագրելով, որ այդ և նախորդ հիշատակության՝ 1176 թ. իրադարձությունը նշված է իր օգտագործած 12 ձեռագրերից միայն մեկում[15]։

Ինչպես տեսնում ենք տարակարծություններ կան թե՛ «ժամանակագրության» ավարտման թվականի և թե՛ պատվիրատուի ինքնության հարցերում։ Սամուելի աշխատությունը պարունակող ձեռագրերում դեպքերի թվարկումը հասցված է մինչև Գրիգոր Տղայի աթոռակալության շրջանը։ Հենց այս հանգամանքն էլ հիմք է տվել, որպեսզի հիշյալ կաթողիկոսը ժամանակագրության պատվիրատու համարվի։ Սակայն ինչպես երևում է բուն շարադրանքից, Անեցին առանձնահատուկ վերաբերմունք ունի հատկապես

---

5 Սամուել Անեցի, էջ 3, 51։

6 Ղ. Ալիշան. Շնորհալի և պարագայք իր. Վենետիկ, 1873, էջ 121—122։

7 Նույն տեղում։

8 Գ. Զարբհանալյան. Պատմութիւն հայկական հին դպրութեան, Վենետիկ, 1886, էջ 600, 650—651։ Տե՛ս նաև՝ Մ. Օրմանյան. Ազգապատում. հ. Ա, Պեյրութ, 1959, էջ 1394։

9 Ա. Զամինյան. Հայ գրականության պատմություն. մասն Ա, Նոր Նախիջևան, 1914, էջ 191։ Տե՛ս նաև՝ Գրիգոր Տղա. Բանաստեղծություններ և պոեմներ (աշխատասիրությամբ Ա. Մնացականյանի). Երևան, 1972, էջ 45։

10 Մ. Արեղյան. Երկեր. հ. Դ, Երևան, 1970, էջ 103։

11 Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. Դ, Երևան, 1948, էջ 384։

12 Ա. Առաքելյան. Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն. հ. Ա, Երևան, 1959, էջ 458։ Լ. Բաբայան. Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության. Երևան, 1981, էջ 177։

13 Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 805։

14 Ս. Մելիք-Բախշյան. նշվ. աշխ., էջ 173։

15 Սամուել Անեցի, էջ ԻԸ, 139։

Գրիգոր Գ Պահլավունու նկատմամբ։ Սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև իր ժամանակի հայրապետները պատմիչի կողմից հիշատակվում են, իր իսկ բնորոշումով, «կարճ ի կարճոյ» սկզբունքով և միայն Գրիգոր Պահլավունուն է գովաբանական ձոն ուղղվում։

Այսպես, Լուսավորչի մասին գրում է՝ «ի ժէ ամի Տրդատայ նստի յաթոռ առաքելոյն Թադեոսի սուրբն Գրիգոր»[16]։ Սարգիս Սևանցու մասին՝ «տէր



Սարգիս ամս ԻԴ»[17], Գրիգոր Վկայասերի՝ «տէր Գրիգորիս ամս ԺԷ»[18], Բարսեղ Անեցու՝ «ՈՁԵ տէր Բարսեղ ամս ԼԱ. նստաւ տէր Բարսեղ յաթոռ հայրապետութեան՝ որդի Վասակայ և զամենայն հակառակն հնազանդեցուցանէ»[19], Եվ վերջապես Գրիգոր Գ Պահլավունու մասին գրում է. «ի ՇԿԲ ամին վախճանեցաւ տէր Բարսեղ հայրապետն Հայոց և յաջորդէ զաստիճանն տէր Գրիգորիս մեծաշուք պատուով նստեալ յաթոռ վիճակի սրբոյն Գրիգորի Հայաստանեայցս լուսավորչի. որ յազգէ նորին հարազատութեան ճանաչի։ Եւ յաղագս աստուածընկալ և հոգիընկալ շնորհի ընկալելոյ և սրբական և մաքրափայլ վարուց պատուեալ փառաւորութեամբ, ոչ միայն ի մերազնեայ արանց, այլև յաւտարասեռ թագաւորաց և յիշխանաց. մանաւանդ ի Հռոմայեցւոց թագաւորացն և պատրիարգացն։ Սա չոգաւ ի քաղաքն սուրբ յԵրուսաղէմ (Գրիգոր Պահլավունին Երուսաղեմում զատկի տոնին և եկեղեցական ժողովի է մասնակցել 1142 թ.[20]) և անդ ... իմացեալ զառատահոս ծաւա-

16 Սամուել Անեցի, էջ 63։

17 Նույն տեղում, էջ 103։

18 Նույն տեղում, էջ 112։

19 Նույն տեղում, էջ 117։

20 Մ. Օրմանյան. նշվ. աշխ., էջ 1367։

լումն աստուածային շնորհին ի վերայ հայրապետին, ազգն հոռոմայեցւոյ ... պատշաճագեղ տեսիլ մարմնոյն ծանեան և զհոգւոյն գեղեցկութիւն և ... ուրախացան հաճելութեամբ և առաւել սէր հաստատեցին ընդ հայրապետին և ընդ ազգս մեր ...»[21] և այլն։ Համեմատությունը միանգամայն որոշակի է դարձնում Գրիգոր Գ Պահլավունու դերը համառոտաբան ժամանակագրի աշխատանքում։ Սակայն ավելի կարևոր է, որ կաթողիկոսին նվիրված հիշյալ ընդարձակ հատվածից հետո, Անեցին ուղղակիորեն դիմում է նրան. «Բայց վասն զի զսկիզբն ամաց և յաջորդել առաջնորդութեան կամիմ տակաւին նշանակել և այսպիսի յաջողուածք և այլ բարեբաղդութիւնք և գործք գործելիք զկնի ամաց աւր ըստ աւրէ յաւելաւ ... Եւ աստանօր զայսոսիկ ծանուցում մերոյ հրամանատուիդ և պատուասիրի»[22]։

Այս պարբերության առկայությունը ստիպում է այլևս չտարակուսել, որ Սամուելի հովանավորն ու պատվիրատուն Գրիգոր Գ Պահլավունին է եղել։ XII դարում Հայոց կաթողիկոսարանը քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով շարունակ տեղից տեղ էր փոխադրվում։ Գրիգոր Պահլավունու ժամանակ այն Ծովքից տեղափոխվեց Հռոմկլա։ Սակայն ուշագրավ է, որ Բարսեղ Անեցու հաջորդը լինելով, այս կաթողիկոսը նպատակ է ունեցել հաստատվել Անիի լքված կաթողիկոսարանում։ Սամուելի վկայությամբ նա մշտապես մտահոգված էր Անիի կացությամբ «վասն իւր սեփական աթոռոյս»[23]։ Շեգդադյանների և վրացական թագավորության ընդհարումները, սակայն, թույլ չտվեցին, որպեսզի իրականանա Գրիգոր Պահլավունու ծրագիրը։ Կաթողիկոսի՝ Անիի հետ կապվածության ուշագրավ դրսևորում է նաև քաղաքի Մայր տաճարի քահանա Սամուելին ժամանակագրություն պատվիրելը։ Անեցու երկին անդրադարձողները սովորաբար տարակուսում են, թե ինչու է հեղինակը 1124 թ. Անիի ապստամբության նկատմամբ հիմնականում բացասաբար արտահայտվում, դրելով, որ քաղաքացիները «նենգեցին ամիրայն Աբլսուարայ ...»[24], նկատի չառնելով, որ հենց այդ ընդվզման հետևանքով պատերազմների անհանգիստ շրջան սկսվեց և ձախողվեց Գրիգոր Պահլավունու Անիում հաստատվելու մտադրությունը։

Այժմ փորձենք պարզել, թե երբ է պատմիչն ավարտել իր աշխատանքը։ Անեցու «ժամանակագրության» առայժմ հայտնի ամենավաղ ընդօրինակությունը ամփոփված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 5619 ժողովածուում (էջ 6 ա—108 ա), գրված՝ Արշարունիքի Կամրջաձորի վանքում, Ավետիս գրչի ձեռքով։ Բարեբախտաբար հիշատակարանում նշված է գրչության թվականը. «Տառագծեցաւ այս յամառաւտ յայտարարութիւնք ... Ի ՈԻԵ (1176) թուականութեանն Հայոց ի տիեզերահռչակ ուխտս Կամրջաձորոյ»[25]։ Ժամանակագրության այս օրինակը ևս զերծ չէ հետագայի գրչական միջամտություններից, սակայն դրանք շատ փոքր թիվ են կազմում, գրված են Ավետիսի գրից միանգամայն տարբերվող ձեռագրով և մուգ դույնի թանաքով։

---

21 Սամուել Անեցի, էջ 122—123, հմմտ., ՄՄ, ձեռ. № 5619, էջ 101 բ—102 ա։

22 Նույն տեղում, էջ 123, համապատասխանաբար՝ 102 ա—102 բ։

23 Սամուել Անեցի, էջ 127։ Այս կապակցությամբ Մ. Օրմանյանը գրում է, որ Գրիգորը «Բարսեղ Անեցի կաթողիկոսին ներշնչալ՝ ուխտ սիրոյ ուներ վասն սեփական աթոռոյս և կը փափագեր զալ այստէն Անիի աթոռը և այս նպատակով բանակցության ալ մտած էր Ապլսուարի հետ, երբ նա Մանուչէի հաջորդեց, որպեսզի նորա յօժար կամակցութեամբ այդ բանը կատարվեր». Մ. Օրմանյան. նշվ. աշխ., էջ 1362 (ընդգծումները հեղինակային են՝ Անեցու «ժամանակագրությունից» քաղված)։

24 Սամուել Անեցի, էջ 25—27։

25 ՄՄ, ձեռ. № 5619, էջ 108 ա, հմմտ. Ե—ԺԲ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 219։

Մատյանում ժամանակագրությունն ավարտվում է 1173 թ.[26]։ Վերջին թերթի վրա զետեղված են հետևյալ հինգ հիշատակությունները.

ՈԺԲ (1163) Ապա զաւրաժողով լինեալ սուլտանն Խորասանա եկեալ ի դուռն քաղաքիս Անւոյ և զարհուրեցոյց զրնակիչք սորա. յետ Լ(30) աւուր գաղտագողի աղուևսաբար և հար զթագաւորն Գիորգի և զաւար նորա էառ և դարձաւ ի տեղի իւր։

(այսաեղ տողի երկու կողմից միագիծ բաժանարար կամ վերջնազարդ է դրված)։

ՈԺԵ (1166) Վախճանի տէր Գրիգորէս և յաջորդէ զկնի նորա եղբայր նորուն տէր Ներսէս։

ՈԺԶ (1167) Աստ եղև շարժն Երզնկային։

ՈԺԷ (1168) Ցայսմ ամի մեռաւ մեծ իշխանն Հայոց Թորոս։

ՈԻԲ (1173) Փսխի մահուամբ առ Քրիստոս տէր Ներսէս և փոխանորդի զաթոռն տէր Գրիգոր Տղայ կոչեցեալն։

Վերջին հիշատակության մոտ, աղյուսակում գրված է. «Տէր Գրիգոր ամս Ի (20)»[27] (տե՛ս լուսանկարը), սակայն սա հետագայի հավելում է, որովհետև Գրիգոր Տղայի քսաներորդ տարին 1193 թ. է, իսկ Ավետիսը ձեռագիրն ընդօրինակել է 1176 թ.։ Բնականաբար, Սամուելն էլ ժամանակագրությունը կազմել է Ավետիսի ընդօրինակությունից առաջ, ուստի նա ևս չէր կարող նշել Գրիգոր Տղայի աթոռակալության 20 տարիների մասին։ Աղյուսակում տեղ գտած բոլորգիր և պատվագրված Ի-ն (ամս Ի) առանձնանում է թվական նշանակությամբ մյուս՝ երկաթագիր տառերից։

Ժամանակագրության այս հատվածին անդրադարձած Գ. Աբգարյանը վկայակոչված «Ի» թվականը հետագայի հավելում չհամարելով գտնում է, որ դրուն ձեռագիրն է հետագայի գործ, գրելով. «Ավետիս գրչի ձեռքով գրված հիշատակարանը պատկանում է ոչ թե քննվող ձեռագրին (ՄՄ, № 5619), այլ արտագրված է Սամվել Անեցու ժամանակագրության 1176 թ. ընդօրինակված մի ձեռագրից, որը մեզ չի հասել։ Այս ձեռագրից մեր ձեռագիրն արտագրված է ... առնվազն տասնհինգ տարի հետո՝ 1195 թ.»[28]։ Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Տղայի աթոռակալության 20 տարիների նշումը պատճառ է դարձել ձեռագիրը Ավետիսի գործ չհամարելու ենթադրությանը, որը անհավանական է, քանի որ ժամանակագրությունն ու Ավետիսի հիշատակարանն արտագրելով կարծեցյալ գրիչը դժվար թե «մոռանար» իր հիշատակարանը գրել։ Բայց եթե անգամ նման հնարավորությունը չբացառենք, միևնույն է, փաստն այն է, որ Ավետիսը ժամանակագրությունն ընդօրինակել է 1176 թ.։

Նկատենք, որ Կամրջաձորի ձեռագիրը ոչ միայն վաղեմությամբ, այլև օրինակի ստուգությամբ իր վրա է հրավիրել ուսումնասիրողների ուշադրությունը[29] և միանգամայն վստահելի աղբյուր է ժամանակագրության վերջին թվականը ճշտելու խնդրում։ Այստեղ, ինչպես տեսանք, շարադրանքն ավարտվում է 1173 թ., որի տակ նշված է Ներսես կաթողիկոսի մահը և Գրիգոր Տղայի աթոռակալությունը։ Նույն տեղեկությամբ և նույն թվականով է ավարտվում նաև XII դարի վերջերին Մխիթար Անեցու ձեռքով Հոռոմոսում գրված

---

26 ՄՄ, ձեռ. № 5619, էջ 107 ա։ Հենվելով սույն ձեռագրի վրա՝ 1173 թ. «ժամանակագրության» ավարտի թվական է համարում Ա. Մաթևոսյանը (Ե—ԺԲ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 206)։

27 ՄՄ, ձեռ. № 5619, էջ 107 ա։

28 Գ. Արգարյան. Մատենագրական նորույթներ.—ՀԽՍՀ ԳԱ, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 1, էջ 84։

29 Գ. Հովսեփյան. Հիշատակարանք ձեռագրաց. հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 464։ Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Հ. Հակոբյան. հ. Ա, Երևան, 1951, էջ 20։ Հ. Մարգարյան. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր. Երևան, 1980, էջ 88 և այլն։

օրինակը (ՄՄ, ձեռ. № 3613, էջ 70 բ)։ Հաջորդ՝ 1174 թ. Անին երրորդ անդամ է դրավվում վրացիների կողմից։ Քաղաքում բնակվող Սամուելը, որը չնայած հակիրճ շարադրանքին 1124 և 1161 թթ. Անիի նմանօրինակ դեպքերի մասին բազմաթիվ մանրամասներ է հաղորդում, իսկ վերջին՝ 1161 թ. իրադարձության նկարագրությունից հետո գրում է «և այսոքիկ ականատես եղաք մեք»[30], չէր կարող լռության մատնել 1174 թ. կատարված փաստը։ Սակայն ո՛չ Կամրջաձորի ու Հոռոմոսի օրինակներում, ո՛չ էլ ժամանակագրության հետագայի ընդօրինակություններում այդ մասին ոչինչ չի ասվում։ Հետևաբար թե՛ այս հանգամանքը, թե՛ Կամրջաձորի ու Հոռոմոսի օրինակներում ժամանակագրության 1173 թ. սահմանափակվելու իրողությունը բացառում են Սամուելի հեղինակային բնագրի ավելի ուշ ավարտված լինելու հնարավորությունը։

Սակայն Ավետիսի մատյանի որոշ մանրամասներից դատելով Անեցին ավելի վաղ է դադարեցրել իր աշխատանքը։ Ձեռագրում ժամանակագրության վերջին էջի ուշադիր զննումից երևում է, որ 1163 թ. նշված դեպքի (Անիի 30-օրյա պաշարումը և վրաց Գեորգի III-ի անակնկալ պարտությունը) արձանագրումից հետո, սյունակի երկու կողմից դրված է ավարտ խորհրդանշող բաժանարար կամ վերջնազարդ։ Այդ հատվածի տողերը գրված են ավելի խիտ, թանաքի համեմատաբար հաստ գծերով, իսկ վերջին բառերը (տեղի իւր) զետեղված են տողի կենտրոնում, ինչը սովորաբար արվում էր շարադրանքի վերջում (տե՛ս լուսանկարը)։ Գրչական աշխատանքի նշված առանձնահատկությունները միայն մի բան են վկայում. որ այդտեղ ավարտվել է բուն բնագիրը։ Կամ Ավետիսի ձեռքին եղած նախօրինակում նման վերջնազարդ է եղել, կամ գրիչն ինքն է այն դրել ցույց տալու համար Սամուելի երկի ավարտը։ Ընդ որում ժամանակագրության այլ հատվածներում նման նշան չկա և նրա գոյությունը հենց նշված մասում, չէր կարող պատահականորեն լինել։

Հատկանշական է նաև, որ վերջնազարդին անմիջապես հաջորդող 1166 թ. վկայությունը, որը վերաբերում է Գրիգոր Գ Պահլավունու մահվանը և Ներսեսի աթոռակալությանը, այնքան պարզ ու անխռով է դրված (Վախճանի տէր Գրիգորէս և յաջորդէ զկնի նորա եղբայր նորուն տէր Ներսէս), որ դժվար թե պատկանած լինի վախճանված կաթողիկոսի պատվերը կատարողի գրչին։ Անեցին աշխատության սկզբում ու միջնամասում երախտագիտությամբ մեծարելով իր վեհափառ հովանավորին, նրա մահը մի անկիրք նախադասությամբ չէր ներկայացնի։ Մնում է ենթադրել, որ ժամանակագրության վերջին չորս վկայությունները այլ գրչի հավելում են, կատարված բավական վաղ։ Դա երևում է նաև Կամրջաձորի ու Հոռոմոսի օրինակների համապատասխան հատվածների համեմատությունից։ Եթե Ավետիսի մոտ 1163-ից հետո նշվում է Գրիգոր Պահլավունու մահը, որից հետո՝ Երզնկայի երկրաշարժը, ապա Մխիթար Անեցու մոտ ընդհակառակը, հիշատակվում է նախ երկրաշարժը։ Ընդ որում նկատվում է, որ երկու գրիչներն էլ ոչ թե բառ առ բառ ընդօրինակել, այլ արձանագրել են փաստը համեմատաբար ազատ շարադրանքով։ Առաջինը գրում է, որ Գրիգորի մահից հետո՝ «յաջորդէ զկնի նորա եղբայր նորուն տէր Ներսէս» (աղյուսակում՝ «տէր Ներսէս ամս է»)[31], իսկ երկրորդը գրում է՝ «...յաջորդէ զաթոռն եղբայրն Ներսէս ամս է»[32]։

Այսպիսով, մի կողմից Կամրջաձորի օրինակում 1163 թ. դեպքերի շարադրանքից հետո դրված ավարտ ազդարարող վերջնազարդը, մյուս կողմից՝ հաջորդ՝ 1166 թ. իրադարձության մատուցման աննրդաշնակությունը աշ-

30 Սամուել Անեցի, էջ 137։

31 ՄՄ, ձեռ., № 5619, էջ 107 ա։

32 ՄՄ, ձեռ., № 3613, էջ 70 բ։

խատության ոգուն (և ընդհանրապես պատվիրատուի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի ընդունված կարգին), ինչպես և բերված մյուս փաստարկները, թույլ են տալիս ենթադրել, որ Սամուել Անեցու «ժամանակագրությունը» ավարտվել է 1163 թվականով։

Հնարավոր է, որ հարցի վերջնական ճշգրտումը կատարվի Անեցու երկի համեմատական բնագրի ստեղծման ընթացքում, սակայն մի բան պարզ է, 1180-ը «ժամանակագրության» ավարտի թվականը չէ, իսկ Կամրջաձորի օրինակից դատելով, պատմիչի վերջին նշումը կատարվել է հենց 1163 թ. պատվիրատու Գրիգոր Գ Պահլավունու կենդանության օրոք։

ДАТА ОКОНЧАНИЯ «ХРОНОЛОГИИ» САМУЭЛА АНЕЦИ И ЕЕ ЗАКАЗЧИК

К. А. МАТЕВОСЯН

Резюме

В историографии окончательно не выяснен вопрос о том, до какого года доводит свою Хронологию летописец XII века Самуэл Анеци. Существуют также разногласия о личности заказчика труда, католикос Григор III Пахлавуни (1113—1166) или Григор IV Тга (1173—1193). Конечной датой принято считать 1180 г., а заказчиком Григора Тга. В вопросе о заказчике определяющим является то, что лаконичный летописец посвящает подробный и хвалебный отрывок Григору III Пахлавуни и прямо обращается к нему как к повелителю. Самый ранний образец труда Самуэла исполнен в Камрджадзоре в 1176 году (Матенадаран № 5619). Естественно, что Хронология написана до этого. Кодикологический анализ последней страницы этой рукописи, где заканчивается текст Хронологии, а также некоторые другие данные позволяют считать датой окончания труда 1163 г.